51. ԱՐՏՈՒԵՆ ԵՎ ԽԱՂԱՂ ԹԱԳԱՎՈՐ

Կըլլի մի թագավոր, էաս թագավորը տղա բան չունենար. վեզիրը կըսե. - Թագավոր ապրած, ինչո՞ւ մտածոց մեջ իս:

- Ես չմտածիմ, ըպա վե՞վ տի մտածե, - ըսըց թագավորը, - ես օր տղա չունիմ, մեռնիմ նե, աշխարքը իրար կը խառնվին, տղա մի չկա օր իմ տեղը նստի:

- Թագավո՛ր, էլլըք թատիր մտնիք, զաման մի օլրտինք:

Էլան դերվիշի ղըլլըխով ընկան ճանբա, օլրտան, օլրտան աղբրին վրան էջան, ջուր խմեցին, տեսան մի դերվիշ քովվանը էկավ:

- Բարև՛, - ըսեց, - թագավո՛ր, վեզի՛ր:

- Դերվի՛շ, դու ի՞նչ գիտես, ես թագավոր իմ, էաս էալ վեզիր է:

- Ես ռեմճի իմ:

- Էնանկ է նե դու իմ ինչ օլտուղին գիտես:

- Գիտեմ, տղա չունիս, - ըսըց:

- Դերվի՛շ բաբա՛, ինձիս մեկ իլաճ-դարման:

Դերվիշ բաբան փիճին տաղարճուխը էջոց, միջուն հանեց մի հեվենկ. դեղերը ծեծեց, մենճ տաղարճուխի միջուն պզտի մի կղպմուն տաղարճուխ հանեց. միջուն քառսուն չեշիտ դեղ հանեց. կարմիր, դեղին, ճերմակ, տվեց թագավորին. թագավորն էալ իրա մանիքը հանեց, դրեց դերվիշի մատը:

- Իննը ամսու քիզի տղա կըլլի, - ըսըց դերվիշը, - օխտը օրը մորը կաթը կուտե, կը կըյրես. մի օդա կը շինես, փենջերե էալ չես թողեր,

ծրագը տի վառես 15 տարի, տղան էդ օդային մեջ տի պեյես, 15 տարվա սորա ես գուգամ, անունը կը դնեմ:

Դերվիշը ըդի ըսըց ու կորավ առջևնուն:

Թագավորն ու վեզիրը դարձան, ինն ամիս օր անցավ, տղան աշխարհք էկավ, եոթ օր կաթ տվեցին, կըյրեցին, դրին օդային մեջ, տասնըհինգ տարին լմնցավ, դերվիշը էկավ:

- Ըսածիդ պես իմ ըրեր, դերվիշ բաբա, - ըսըց:

- Դե գցեք, տղան բերեք օր անուն դնիմ:

Թագավորը վեզիրը ճանբեց օր բերել տա, վեզիրը ներս մննալուն քիմի տղան էլավ դեմը կայնավ, պաշլայեց վեզիրին խզմեթ ինիլը:

- Այ թագավորի տղա՛, - ըսըց վեզիրը, - խզմեթ ընող կա:

- էան իմ պապն է, - ըսըց թագավորի տղան, - ծերունի է, էա՞ն խզմեթ ինե, ես նստիմ:

Վեզիրը ըսըց. - էրթանք թագավորի քով, քիզի կուզե:

- Ես բան չունիմ թագավորի քով. ես վե՞վ, թագավոր վե՞վ:

Վեզիրը շատ կենկեզցավ, չկրցավ օ լախրտու հասկցներ, էլավ մինակ գնըց, ըսըց՝ չգար:

Դերվիշ բաբան ու մեարը ճանբեցին, գըցին շատ, լախրտու էրին, էնոց էալ ճուապ ըրըց, չէկավ:

- Առտուն զոռով կը բերեք, - ըսըց թագավորը:

Տղան գիշերը էրածը տեսավ օ, մի սարայի մեջ է. գնըց օ չորս դուռ կա. մի ծերունի տարեր կօլրցնե. տեսավ պատերը, առիքը, դըռվընին անգին քար, կը վառի, գետինն էալ ընանկ, ըդ տղան կառնե, կէրթա մի օդա ներսը կը հայի մի ձի կապմուն է. օ, թույը օսկի է, կը վառվըռի, աչքը ալմաստ քար է, ըղընկվընին էալ անգին քար է. ալափ-ալափ կը վառվըռի. տասվերկու թև ունի օր ճերմակ է: Տալմիշ կըլլի կարթըննա, օր իրան օրթվին մեջ է:

«Ա՜խ, ա՜խ, - ըսըց տղան, - ըդ ձինը իմը ըլլեր, քեշկե չէի տեսեր»:

Տղուն ավլա քունը տարավ, ըն ծեր մարդը ըսըց. « Տղա՛ս, մի՛ լար, ըն ձին քուկդ է, ես քիզի տի տամ»:

Արթըցավ օ, կենե օրթվին մեջն է, մտածեց, օ տի գան, իզինք զոռով տանին, պաշլայեց լացը. անքան լացավ, օ վրու ընկողինը թրջավ, խելքը զիվանեն էլավ, տեսավ ըն ծեր մարդը ըն ձիուն քովը կայնավ. տղան առավ թերքին. ձինը էլավ օ տի էլա էրկինք. ծերունին կեմը քաշեց նը կէլլըր դեարվեր - էրկինքը, օր թուլցներ նը, գետինը կէջներ, քաղքեն մի սահաթ դենը էջոց գետին ափը:

Ծերունին ձին առավ, կորավ, տղան մնաց ափուն վրա, մութը, աչքը բացավ օ ճանբան էփեյիճե աչքը կը զատե. հայավ օ մի քար նետելու հեռուն մի օխչար օ չորս հատ աղջիր ունի, տեսավ ամեն աղջրի վրան մի ֆեներ կը վառի, լոսը առավ իզինք, էլավ, պաշլայեց վազիլը՝ օր ըդ ֆեներին հասնի, վազեց մոտեցավ, օխչարը օլրվավ, հետին հայեավ օ մի տղա՝ հետին կը վազե. հրեղեն ընդուր օր կը փախնի՝ էնանկ փախավ, տղան շատ հեռու մնաց. օխչարը գնաց մի մորիի հասավ, կայնավ, հայեավ օ գլոխը մի ֆեներ կը վառի. լոսը զարկեց, սաղ մորին լեառու լեանջ լոս է զարկեր. հասավ ծառի մի տակ, տեսավ մի քար. խոնչըցեր էր, քարը բարձրրրց, կռնակը տվեց ծառին, պառկավ, քնացավ: էրածին մեջ տեսավ թագավորը, էկեր կը կանչե. «Այ տղա՛ս, դու օրթվին մեջ չէիր քնանար. էաս ի՞նչ է քու հալ, էլիր էրթք»:

Տղան արթըցավ օ պապ-մապ չկա, ավլա քնացավ տեսավ մեարը էկեր կը կանչե. «Այ տղա՛ս, դու ղումաշե ընկողնին մեջ չէիր քնանար, էլիր էրթք, ինչո՞ւ քարը բարձ ես ըրեր»:

Տղան կինե էլավ նստավ, տեսավ օ ծառներու ֆեները չկա, լոս չկա. էան օխչարն էալ կէրթա. մի աղջրին վրա մի ֆեներ կը վառի. «Կամաց-կամաց էրթըմ, - ըսըց, - օ օխչաը չփախնի, հեռընա»: Հայեավ օ օխչարը էլավ մի բարս սրթի վրա, կործվավ ընթի էրենը, մնաց ինքը մութը. էարինե քրտինք թափեց, էլավ սրթին գլոխը, տեսավ օ օխչարը էրածին մեջ տեսած տունը մտավ, ինքն էալ դարվար էջավ՝ հասավ էան տունը. տեսավ օ էրկնուց բան մի էլավ. կը վառվըռի, ըսըց. «Ես էաս դուռը չիմ մտեր»:

Իրեք դուռ ընցավ, գնաց էան մեկալ դուռը օ մտեր էր, էան դռնով մտավ գնաց ներս օ տասվերկու դուռ կա, մի դուռ բացեց օ ջրի ձեան կուգա, տեսավ խնկա ծաղկի հոտ կուգա, հասավ աղբիրը, աղբրի առաջ դրմուն մի սինի պեզաթմիշ էրած կերակուր, սինին հարիր տասը թիզ, անգին քարը ծաղիկ-ծաղիկ շարմուն է չորս բոլորը, կերակուրը վրան դրմուն է: Սինուն վրա հայեավ, գրմուն է. «Վե՛վ օ իմ խոսքը պեյե, իմ հետին գա, էնոր տեղը էաս սինին է»:

Տղան աղբիրը վլացվավ, սրբվավ, տեսավ սինու բոլորը օսկի աթոռներ օր կը վառվեր, չղըմըշավ նստեր, գետինը ծունկ չոքավ, առջևուն մի լոխմա առավ, չգիտցավ թե մանանե է, մեղր է: «Ըս կերակուրը ես կերած չունիմ», ըսըց: էան խտըր հայավ օ ետևուն մի մարդ կռնըկին մի թեքմուկ զարկեց. եոթն օր օ մորմե կաթ կերեր էր, սրտին վրա թուփվեր էր, էղեր մի կծիկ, եոթ արշուն դեն թռավ բերնեն, տղին արցունքը չաթալ թռավ,

պաշլայեց լացը. օլրվավ ետին, հայավ մի մարդ, ըսըց. - Այ պապի, մի փրթուճ հացի համար մի մարդ կը պանես, ղայիլ չիս, չեմ ուտիր:

- «Պապիկ» օ չէիր ըսեր, քիզի մի բուռ փոշի կինեի, կուտայի հավան կառներ, կէրթր:

Բռնեց տղին շորերը հանեց, աղբրին առաջ լողցոց, գնըց բերեց լաթ-մի զպուն՝ մի շապիկ, մի միջաց ղայիշ, նստան սինու վրան էրկուքը, կերան, վլացվան, տեսան օ էրսունըվինը հատ էկան թևավոր ու ծիավոր, էառջինը ըսըց. - Էկու քիզի պեյիմ:

Տղան էրեց մի օդա, դուռը կողպեց, էկան վլացվան, նստան սեղանի վրան, կերակուր տի ուտեն, մենծերնին ըսըց. - Պզտի՛կ աղբեար, մեղա-վորի հոտ կուգա, ի՞նչ է:

- Մի մարդ էկավ հոս, ես ուրիշ տեղ էի, էկա որ սեղանի վրան տահա նոր նստեր, իրան չէրևացի, մի լոխմա առավ, կերավ. դահա էան լոխման կլլած՝ հում կաթին վրա հասավ, չհասավ, ես մեկ թեկմուկ զարկի, հում կաթը հավկիթի մի պար էր, թռավ բերնեն, դեն գնըց:

- Մեկ մի տահա տի զինեիր, օ ներսի դին աման օր ինդուր կը ղլայես:

- Էնանկ զարկի օ ղալայվավ, դուրս թափավ:

- Կանչե, հոս բեր, - ըսին:

Դուռը բացվավ, տղան էկավ, պիթունին ձեառքը պագնեց, լացավ, աղաղակեց, մենծը ըսըց. - Մի լար, աղբեա՛ր, դու ալ մեր հետ աղբեար իս:

Ըդոնք քառսուն հատ էին, էադ տղան էալ էրին աղբեար, օրը մեկը էադ տեղը կը պեյեր, տղան մնըց քովվանը, քառսուն օր օ մենծին սրա էկավ, կեցավ, մենծը ըսըց տղին. - Առ բանլիս, գնա՛, օդի դուռը բաց, քիզի էյլենմիշ էղիր, ես տեղ տ'էրթմ:

Տղան դուռը բացեց, հայավ պզտի դուռ մի, տեսավ օ էրծին ինդուր օ ձին տեսեր էր, տեսավ էան ձին, լացեց, դըխուլավ, դալմիշ էղավ, էրթըցողնին դարձան, տեսան տղան չկա:

- Ո՞ւր է մեր աղբեարը, կանչե գա օ հաց ուտե:

Գցին օ տղան տխուր էր, տալմիշ է էղեր, թևեն բռնեցին, առին էկան, նստեցոցին. էնոք, իրեն կէրևար, կուտեին, տղան չէր ուտեր, մենծը ըսըց. - էան ձինը քուկդ է, առ, հացդ կեր:

Քառսուն օր մնըց, օրը մեկին օդան, քառսուն օր օ թմավ, էադ օրը կիրակի պեյեցին. էրկու շաբթի լուսցավ, մենծերնին ըսըց. - Պզտիկ աղ-բեա՛ր*, ձինդ կը հեծնաս, տղան ալ կը հեծցնիս. կէջցնես վարի աշխարքը:

---

* Տղին զարնողը, որ ծեր կերևար, պզտիկնին է (ծ.ա.):

Պզտիկնին տղին սորվեցոց օ մենծեն ուզե ծիու տորպակը, քոլոզը, խանչալը:

Տղան գնըց ըսըց մենծին. - Ձին կուտա՞ս նը, թամքն էալ տուր:

- Ձին տվողը թամքն էալ կուտա:

- Թամքը կուտաս նը, խամչին էալ տուր:

- Թամքը տվողը խամչին էալ կուտա:

- Խամչին կուտաս նը, քոլոզն էալ տուր:

- Խամչին տվողնը քոլոզն էալ կուտա:

- Քոլոզը կուտա նը խանչալն էալ տուր:

- Քոլոզը տուողը խանչալն էալ կուտա, տերը պատրաստեր է:

Տղան հեծավ տասուերկու թևավոր ձին, պզտիկնին ընկավ առաջ, առավ, էջավ հողոց վրա, ձիանը սեապեցին, էջան աղբրի վրան նստան:

Պզտիկնին ըսըց. - Առ քու խանչերդ, էաս խանչերին մարիֆեթն է, մերմեր քարին զինես, կը կըյրե. տնեն դոռդոցնես, քառսուն ավուր հեռուն կը կըյրե. ինչ բանի օ սալլաթմիշ ինիս: Տորպակը ձիուն աջուկ թարավը կը կապես, քոլոզը կը ծռիս, գլոխդ կը դնիս, խանչարը ձիու թամքի մեջ տեղ կա, հոն կը դնիս, տորպկին մարիֆեթն էն է օ, ձին յարալի-փարալի կէրևա, հում կաթ ուտողին հիթիպար չըլլիր, ձին ափուցդ չեն առնիր, քոլոզն էալ կը դնիս, իսանի չես էրևար, կէրթս Արտուճ թագավորին իրեք հատ աղջիկ կա. պզտիկը քու խսմեթը գրվեր է. էնի կառնիս, աղջկա սարայն էալ պաղչի մեջ թեք է, ձինը կը կապիս հավուզին գլոխը՝ թագավորի ձիուն քով. կէրթս աղջկան քեմեր զափույին վրա մի օսկի, մի արզաթե սանտալյա կա. օսկի սանտալյայի վրա կը նստիս. թագավորի աղջիկը վերեն կը հայի օր պատասխան տալու ես էկեր. մեջլիսին խապար կուտա, մարդ կը բերե, դու նստուկ տեղեդ չես էլլը. քիզի կըսին, թագավորի աղջիկ ինչ օ ըսե, պատասխանը տի տաս. չտաս նը գլոխդ կը կըյրե: Բարի հրեշտակն ըսըց. «Ինձիս հոտ միտքդ բեր»:

Էլավ տղան, մնըս բարի, էրթս բարի ըսըց, հեծավ ձինը, ընկավ ճանբան ու գնըց, մի տարվա ճանբա գնըց հասավ Արտուճ թագավորի պաղչան, ձինը կապեց, էկավ օսկի աթոռին վրա նստավ, իրա միտքը ընկավ, քոլոզը դրըց գլոխը, փիս հեյպեթ դևի պես մարդ մի էրևաց, աղջիկը հայավ, ըսըց. - Ուր օր գեշ մարդ մի կա, ինձի ըռաստ կուգա. աղկեկ մի ինձի ըռաստ չգար, որ պատասխան չտամ, առնիմ իզինքը:

Աղջիկը մեջլիսին մարդը կանչեց. տղան էալ բերին օրթան. թագավորն էալ էկավ, տղին ըսըց. - Այ տղա՛, մեղք ես, աղջիկն գլոխդ կը զինե:

- Ես պատասխանը կուտամ, - ըսըց տղան:

Աղջիկն ու տղան նստան օղի մեջ, աղջիկը հարցոց. - Տղա՛, ըն ի՞նչ կենդանի է, էռսուն օր կապրի, մե օր կը մեռնի, մեկեալ օր կը սաղնա:

- էան լուսնիակն է:

- Ըն ի՞նչ մարդ է, իրեք ամիս սուգ է, նե կը քնանա, նե կը պարկի, մարդու չէրևար:

- էնի արևն է:

- էան ի՞նչ մարդ է, գցին կարմիր ծովուն քնարը, տ'անցնեիր Սև ծովը, Սև ծովեն էալ ճերմակ ծովը. Կարմիր ծովուն քնարը մի ծառ կար. ընկերտանքը տեսան օ նե կեմի կա. նե հաց կա, նե ջուր կա, ծառին տակ թմրվան, քնացան. էդոց մեկը նե թմրվավ, նե քուն էկավ, տեսավ օ ծառին տալին վրա մի ճանավար կա, միջացը դե կեսը մի հավկթի կեսին մեջ, գլխուն դին մեկեալ կեսի մեջն է, միջոցը քիչ մը բաց կէրևա:

Տղան շատ դժվար էր, դնդվավ, թմպրվավ, բարի հրեշտակին միտքը բերըց ըսըց. - էդոք տասվիրեք մարդ էին, տասվերկուսը աշակերտ, մեծերնին էալ Քրիստոս էր, էան տասվիրեք մարդոց մեկը էտևու հավկիթը առավ, գնըց. մագի պես քաշեց. իրեք հեղ դարձավ. կարմունջ շինեց իրեք ծովու վրա. ընդըուն օ ըսդին էկավ, գլխու հավկիթը առավ, էրկու ձեառքը անցոց մեջ, սխմեց, բացվավ, փակավ ձեռքը, թոթվեց նը ընկավ Կարմիր ծովի մեջ, ներկվավ, էղավ խաս կարմիր, ջրի միջուն օ հանեց, էղեր էր մի խաս կարմիր շապիկ, օ հագավ, խոշուն էադ շապկի վրան էր կռիվ կինեին:

Աղջիկը նը իրան-իրան ըսըց. «էս գեշ տղան ինձիս կառնե»:

- էան ի՞նչ մարդ էր, աշխրքի պիթուն - ճանլի ճանավարին մինե խարաճ առավ. մի կենդանու մինե չկրցավ առեր էր:

- Ընի Ըղըսան թագավորն էր, հերդը լցեց ծովուն վրա, գեյթուն յաղնե լցեց հերդին վրա, կրակը տվեց, վառեց. լոսը զարկեց, ծովուն մեջ ինչ օր ծուկ կար՝ էլան չորը, էրկու մարդ էկան ծուկի թագավորին ըսին. ըղըսան թագավոր, քու մինե խարաճ կուզե:

Թագավորը բերանը բացեց. իրեք անգին քար ընկավ, տարին տվին թագավորին:

- Ըպա ըն ի՞նչ մադր էր, չտվեց խարաճ:

- Ըդի մրչոմին թագավորն էր. Ըղըսան թագավորը տարավ, դրեց շուշեի մեջ, բերանը բռնեց, մրչոմը առաջուց գիտցավ, մի ցորեն թևի տակ պեյած էր. էադ մրչոմի թագավորը տասվերկու տարի շուշի մեջ մնըց սաղ: Ըղըսան թագավոր հայավ շուշի մեջ կօլըրտի մրչոմի թագավորը. բանամ հարցուկ ընիմ, - ըսըց:

Հանեց. ըսըց մրչոմի թագավորին. - Դուն ի՞նչ կուտեիր:

Հանեց ցորնի կեսը ցունց տվեց:

- Ի՞նչ նիաթ կառնեիր, ինչո՞ւ պիթուն չես կերեր:

- Շուշից կառնեի, պիթուն չեմ կերեր, պելքի թագավոր տասվերկու տարի էալ թողեց, մեկալ կեսը կուտիմ:

- Ընկա ետք ի՞նչ տի ինիս:

- Ընկա ետք կը մեռնիմ, խարաճ չիմ իտար:

- Էան ի՞նչ է, - հարցոց աղջիկ, - Աստված իփտիտա օ ստեղծեր է. էն ստեղծածին տահա կենդանի կա:

- Էադ Չաչալ-քերքեզն է, ընու մեռնիլ չկա. մինչև աշխրքիս սոնը:

- Էան ի՞նչ է, տարին մի անգամ խորոզի պես կը կանչե, նե էրկինքն է, նե գետնինն է:

- Էադ Չեչել-քերքեզին խորոզն է, երբ համբարձման լեառը Քրիստոս համբարձավ, չորս դին ձեառք կապեցին, Քրիստոս օրթալախը, իրանք բոլորը, վեր էլան, քանի օր գլխները չէր էարեր էլան, օր էարավ գլխնին, ընկան վեար:

Աղջիկը մտոցը անցոց. «Ըս տղան ինձիս կառնե, ըստու գեշ հոտ կուգա, ի՞նչ ինիմ, Աստված»:

- Ըն ի՞նչ կենդանի է, քառսուն օր գիշեր-ցերեկ կը կանչե, քառսուն օրեն էտև կը մեռնի:

- Ըդոր ժիժի կըսին, գիշեր-ցերեկ կը կանչե ... կը մննա իրա հավկիթի մեջ, կը մեռնի, վախտն օր էկավ, ավլա կը սաղնա:

- Էան ի՞նչ է, էրկու թև ունի, լանութին էալ արշուն մե. էրկանիթին էալ արշին մե, պոյն ալ արշին մե. իրեք ամիս սաղ կը մնա, ինը ամիս՝ մեռած:

- Ուտելո՞ւ է, նետելո՞ւ է, - ըսըց տղան:

- Ուտելու է, - ըսըց աղջիկ:

- Ընի իջխունն է, - ըսըց տղան:

- Աշխարհ ի՞նչ կա, ժաժ կուգա տեղնոցը:

- Քամին, ծառը, խոտը, ջուրը գետնին անթութեն ժամ կուգայ:

- Ինչպես գետինը ժաժ կուգա:

- Ինչ քերխահա ըսիս գետնին տակը կա, կը, կպի կը վառի, էնոր համար ժաժ կուգա:

- Էրկինքն էա՞լ ժաժ կուգա:

- Էանանկ ժաժ կուգա օ ասղերը կը խաղա, ժամանակ կըլլի էրկինքը ջաղցի քարի պես կը դառնա:

- Ինչպե՞ս կը խաղա արևը մեարը մտած ժամանակ, էրկու սահաթեն ետև արևը ո՞ւր կէրթա:

- Արևը կը մննա ղաֆեսը, ղաֆեսին տյուման կա, կօլրվի, տյումանն էալ հետը կօլրվի:

Աղջիկը ըսըց. - Չիմ հավատար:

- Իրիկվան քիզի կը սալխցնեմ, - ըսըց տղան:

- Էրկինքը պառած տեղը հայեավ քարսուն օր, քարսուն գիշեր արդև կուգար:

- Ըդ կարը տեսա՞ր, - ըսըց տղան, - ըս կարը կօլրվի կուգա ...* վրան, կըլոսնա:

- Էան ի՞նչ մարդ էր, անասունը 12 տարի բանտ դրեց:

- Էան Ըղըսուն թագավորն էր, խարճ ուզեց, խարճը չտվեց, բանտ դրեց:

- Ծաղիկ մի կար, մի սեռն ուներ, վրան ալ չատր ուներ, տակը հազար հատ զուաղ ուներ:

- Սունկն:

- Էան ի՞նչ է, վերուցի զարկի, մեջ տեղեն քաշեցի, ամեն դի մե մի կախեցի, չոր զարկի, ջուր հանեցի:

- Չիուն թամքը, փորքաշը, ասպանդակներն ու սանձը:

- Էան ի՞նչ է, նե էրկինքն է, նե գետին է, օսկի ղաֆասի մեջ մեկ Աստուծո ձեռքն է:

Էան իսանիս հոգին է**:

---

* Լեռան անուն (ծ.բ.):

** Սույն հեքիաթը կիսատ մնաց որ ապագային գրեմ, սակայն իմ բացակայությանս միջոցին մեր Մինաս Բաբար մեռավ (ծ.բ.):